ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/115» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մուտքի հսկողության համակարգի (անձնակազմի մուտքի և ելքի հսկողության արդիականացված համակարգ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.12.2024 թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան

Արման Երանոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Էլ. Փոստ
1	«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ	info@impex.am
2	«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ	marketing@flexap.am
3	«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ	creative.business1920@gmail.com

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 «ՀՈՒԴԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցը ներկայացրել հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Գնման գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ		«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ		«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	3912333	1800000	2160000	2883000	2883000	400000000	480000000*

*Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.12.2024թ. ժամը 12:30-ին

6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

6.1 **«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ Համակարգով ներկայացված չէ տեխնիկական բնութագրին կից ներկայացվող առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ տեխնիկական բնութագրում նշված մուտքի և ելքի հսկողության համակարգում ներառվող, առաջարկվող ապրանքների և դրանց ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքը, որը պետք է համապատասխանի հրավերով պահանջվող՝ տեխնիկական բնութագրին կից ներկայացված տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6.2 **«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի** կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1 դիմում-հայտարարությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, ընթացակարգի ծածկագիրը և պատվիրատուի անվանումը սխալ են, մասնակցության իրավունքի պահանջները լրացված են թերի՝ բացակայում է մասնակցի փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու վերաբերյալ հավաստումը:
- Հավելված 1.3 իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես ներկայացված ընթացակարգի ծածկագիրը սխալ է:
- Կցված լիազորագրում սխալ են նշված ընթացակարգի ծածկագիրը և պատվիրատուի անվանումը, ինչպես նաև այն արտատպված (սկանավորված) չէ հաստատված բնօրինակ փաստաթղթից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1 և 6.2 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկելուց հետո՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 30.12.2024թ. ժամը 10:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել է հանձնաժողովի կողմից 6.1 և 6.2 կետերով արձանագրված անհամապատասխանությունները::

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել **«ԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ին**:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել **«Ֆլեքսիբլ Ափլիքեյշնս» ՓԲԸ**-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.3 **«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ**-ի հայտը մերժվել է համակագի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան

---------- Անահիտ Հակոբյան

---------- Արման Երանոսյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/